

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
28 հուլիսի 2010 թ.
Պետական գրանցման թիվ 11010270

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

21 հուլիսի 2010 թ.

N 1167-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏՔՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ կետը՝

Հրամայում եմ՝

1. 2010/2011 ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության ասպիրանտուրայում (առկա և հեռակա) և հայցորդության համակարգում (2012 թվականի հունվարի մեկից) հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտական կազմակերպություններում ներդնել հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված կրեդիտային համակարգ՝ համաձայն հավելվածում բերված «Ուղեցույց»-ի:

(1-ին կետը լրաց. 03.05.11 N 483-Ն)

2. Հանձնարարել ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Սուքիասյան) և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) սույն հրամանը 3-օրյա ժամկետում ներկայացնել գրանցման ՀՀ արդարադատության նախարարություն:

3. Հանձնարարել ՀՀ ԿԳՆ աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ռ. Սուքիասյան)՝ գրանցումից հետո 5-օրյա ժամկետում տեղեկացնել բարձրագույն ուսումնական հաստատություններին և գիտական կազմակերպություններին բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում կրեդիտային համակարգի ներդրման մասին:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

Ա. Աշոտյան

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2010 թվականի հուլիսի 21-ի
N 1167-Ն հրամանի

ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏՔՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆՈՒՄ ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության երրորդ աստիճանում անհրաժեշտ է ներմուծել ավելի կազմակերպված կրթական բաղկացուցիչ, քան այսօր պահանջվող երեք թեկնածուական միևնույնի պահանջներն են: Այն պետք է ապահովի ասպիրանտի գիտելիքների, ունակությունների և կարողությունների ավելի լայն շրջանակ՝ ապագա հետազոտական կարիերայի ավելի լայն տիրույթի ընդգրկմամբ: Նման ուսուցումը ավանդական գիտամանկավարժական (ակադեմիական) գործունեությունից բացի ներառում է նաև այլ հետազոտական աշխատանքի հնարավորություններ՝ արդյունաբերությունում, գործարար կառույցներում, պետական կամ մասնավոր կրթական և հետազոտական կազմակերպություններում և այլն:

Ելնելով իր խնդիրներից, հետազոտողի ծրագրի կրթական բաղկացուցիչը պետք է ունենա 4 հիմնական բաղադրիչներ.

1) Մասնագիտական գիտելիքների և կարողությունների ուսուցում գիտության և տեխնոլոգիաների մեկ կամ մեկից

ավելի փոխկապակցված (միջմասնագիտական) ուղղություններով:

2) Ընդհանուր բազային հետազոտական կարողությունների ուսուցում (հետազոտական մեթոդներ և եղանակներ, հետազոտությունների կառավարում, վերլուծության, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություններ, գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում, ակադեմիական գրագրություն օտար լեզուներով, գիտական էթիկայի կանոնների և մտավոր սեփականության իրավունքի իմացություն և այլն):

3) Կառավարման և հաղորդակցման կարողությունների ձևավորում (գրավոր և բանավոր հաղորդակցության կարողություններ, աշխատանք գիտական թիմերում և ցանցերում, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում և ղեկավարման հմտություններ, ժամանակի կառավարում, կարիերայի կառավարում՝ ներառյալ աշխատանքի որոնման հմտություններ և այլն):

4) Դասավանդման և գիտամանկավարժական մեթոդների ուսուցում և համապատասխան ծիրքերի ձևավորում:

Ծրագիրը պետք է առաջադրի դասընթացների և կրթական այլ մոդուլների լայն ընտրություն՝ դասավանդման տարբեր ձևերի՝ դասախոսությունների, սեմինարների, կոլոքվիումների և քննարկումների զուգակցմամբ, ընդ որում սեմինարներին և ինտերակտիվ դասընթացներին պետք է տրվի առաջնություն:

Ցանկալի է, որ մասնագիտական և հետազոտական կարողությունների ուսուցումը պարտադիր լինի, բայց տրամադրվի դասընթացների և կրթական մոդուլների լայն ցանկից ընտրության հնարավորություն:

Կառավարման և հաղորդակցման կարողությունների, ինչպես նաև գիտամանկավարժական մեթոդների ուսուցումը նպատակահարմար է իրականացնել կամ ընտրական սկզբունքով, տալով ուսուցման բովանդակության ընտրության հնարավորություն՝ անհատական կարիքներին համապատասխան:

Ծրագիրը բաղկացած է երկու փոխկապակցված կառուցվածքներից՝ կրթական (պարտադիր և ընտրովի ընդհանուր և մասնագիտական դասընթացներ և կրթական մոդուլներ) և հետազոտական (ինքնուրույն հետազոտական աշխատանք, ատենախոսության կատարում): Առաջարկվում են հետազոտողի եռամյա կրթական ծրագրի պլանավորման հետևյալ ընդհանուր սկզբունքները.

1) Հետազոտողի եռամյա ծրագրի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի (կամ 180 կրեդիտ X 30 = 5400 ժամ՝ ներառյալ լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանքը):

2) Ծրագրի 20-30%-ը (տոկոսը սահմանվում է մասնագիտական առանձնահատկություններից ելնելով) կազմում է կրթական բաղկացուցիչը, որը համապատասխանում է 36-54 կրեդիտի կամ 1080-1620 ժամ լրիվ ուսումնական բեռնվածության, և ներառում է ընդհանուր և մասնագիտական ընտրովի և պարտադիր դասընթացներ և այլ կրթական մոդուլներ (ներառյալ թեկնածուական 3-5 քննությունները և ստուգաբլքը, մանկավարժական կամ հետազոտական պրակտիկան և այլն):

Ծրագրի մասնագիտական կրթամասի կրեդիտների թիվը սահմանել կրթական բաղկացուցիչ կրեդիտների թվի 1/3-ը՝ 12-18 կրեդիտ՝ կախված կրթական բաղկացուցիչի հատկացված տոկոսից:

3) Ծրագրի մնացած 70-80% ծավալը՝ 126-144 կրեդիտ 3780-4320 ժամ, կազմում է հետազոտական բաղկացուցիչը՝ ինքնուրույն հետազոտական աշխատանքի, թեկնածուական ատենախոսության կատարման և եզրափակիչ ատեստավորման՝ հրապարակային պաշտպանության տեսքով (վերջինիս համար հատկացվում է 5 կրեդիտ):

Ելնելով վերը շարադրածից, ներկայացվում է հետազոտողի ծրագրի նախագծման ընդհանրացված սխեման, որտեղ՝ ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների, անհրաժեշտ է հաշվարկել և տեղադրել կրեդիտները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄՈԴՈՒՆԵՐ	Կրեդիտներ
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿՐԹԱՄԱՍ	
Օտար լեզու (անգլերեն կամ ֆրանսերեն կամ գերմաներեն)	
Գիտության փիլիսոփայություն և մեթոդաբանություն	
Մանկավարժություն և հոգեբանություն	
Գիտական էթիկա (ընտրովի)	
Ակադեմիական գրագրություն օտար լեզուներով	
Գործարար գրագրություն և հաղորդակցման կարողություններ (ընտրովի)	
Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏՐՈՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ	
Ուսուցման նոր տեխնոլոգիաներ	
Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ	
Նախագծերի մշակում և կառավարում	
Հետազոտական աշխատանքների կազմակերպում	
Կարիերայի կառավարում և աշխատանքի որոնման մեթոդներ (ընտրովի)	
Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում և ղեկավարում (ընտրովի)	
Ինտելեկտուալ սեփականության իրավունք և պատենագիտություն	
Ընտրովի դասընթաց ինֆորմացիոն տեխնոլոգիաների դասընթացների ցանկից	
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏՐՈՍՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՄԱՍ	
Մասնագիտական պարտադիր դասընթաց - 1	
Մասնագիտական պարտադիր դասընթաց - 2	

Մասնագիտական պարտադիր դասընթաց - 3	
Մասնագիտական ընտրովի դասընթաց - 1	
Մասնագիտական ընտրովի դասընթաց - 2	
Մասնագիտական ընտրովի դասընթաց - 3	
Մասնագիտական ընտրովի դասընթաց - 4	
ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ	
Մանկավարժական պրակտիկա	
Հետազոտական պրակտիկա	
Թիմային աշխատանքի պրակտիկում	
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	
Գիտական սեմինարներ և աշխատաժողովներ	
Գիտահետազոտական աշխատանք և ատենախոսության կատարում	
ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐ	
Որակավորման քննություն փիլիսոփայությունից	
Որակավորման քննություն օտար լեզվից	
Որակավորման ստուգաթիվ ինֆորմատիկայից	
Որակավորման քննություն մասնագիտությունից (առնվազն 2 քննություն)	
Եզրափակիչ ատեստավորում	5
ԸՆԴԱՄԵՆԸ՝ 180 կրեդիտ	180